ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅՑԵՑ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԸ

Կիրակի, ապրիլի 27-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների ծիրից ներս այս անգամ եկեղեցականաց դասի առաջնորդությամբ Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արագածոտնի թեմի ուխտապահ ժողովուրդը: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը:

«Մենք եկել ենք, Վեհափա՛ռ Տեր, օշականաբնակ մեծ սուրբի՝ Մեսրոպ Մաշտոցի խորհրդով, Արագածի կանթեղի խորհրդով, Սուրբ Լուսավորչի քայլած վայրերի խորհրդով տեսնելու մեր հայելին այս տաճարի միջից, և մեր սիրտը, միտքը, հոգին դրոշմելու Իջման Ս. Մեղանի խաչի վրա՝ որպես պատրաստակամություն գործելու և ապրելու հայոց այս մեծ տան հոգևոր վերելքի և մեր հայրենիքի ու ազգի պայծառության և լուսավոր գալիքի համար»,- ասաց Հայր Սուրբը (տե՛ս էջ 84):

Հանուն Նորին Սրբության և Մայր Աթոռի միաբանության ուխտավորներին ողջունեց նաև Մայր Աթոռի դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Հավարտ Ս. Պատարագի ուխտավորների բազմությանը Վեհարանում, հանդիսությունների սրահում, ընդունեց Վեհափառ Հայրապետը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ